

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Արրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բագրատյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-332-20.09.2013-ՖՎ-010/0) վերաբերյալ:

Նախագծով առաջարկվում է 2014 թվականի հունվարի 1-ից Հայաստանի Հանրապետության տարածքում արգելել արտարժույթային վարկերը՝ ելնելով տնտեսավարող սուբյեկտների հավասար տնտեսավարման դաշտում գործելու, Հայաստանի Հանրապետության ազգային արժույթի դիրքերն ամրապնդելու, միջազգային պահուստները խնայելու անհրաժեշտությունից:

Հարկ է նշել, որ «Արժույթային կարգավորման և արժույթային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն Հայաստանի Հանրապետության տարածքում ֆինանսավարկային կազմակերպությունների կողմից սպառողա-

կան վարկերը տրամադրվում են միայն դրամով, իսկ արտարժույթով տրամադրվում են հիմնականում միայն բիզնես վարկերը, որը պայմանավորված է տնտեսավարող սուբյեկտների կողմից արտերկրի գործընկերների հետ ունեցած առևտրային հարաբերություններով: Բացի դրանից՝ ֆինանսավարկային կազմակերպությունների գործունեության կարգավորման նորմատիվներով տարբերակված պահանջներ են սահմանվում արտարժույթային և դրամային ակտիվների համար, ընդ որում, արտարժույթայինի դեպքում՝ ավելի խիստ: Փաստորեն, ստեղծված է մի իրավական դաշտ, որի պարագայում արտարժույթով վարկավորումը վարկային կազմակերպության համար դառնում է ավելի ծախսատար և համեմատաբար ոչ ձեռնտու:

Միաժամանակ հայտնում ենք, որ ֆինանսավարկային կազմակերպությունների կողմից ընդհանուր արտարժույթային վարկավորման կտրուկ արգելումը և սահմանափակումը երկրի ֆինանսատնտեսական զարգացման ներկա փուլում կարող է առաջացնել տնտեսական ակտիվության անկում՝ կապված տնտեսավարող սուբյեկտների կողմից արտարժույթային ֆինանսական միջոցների պահանջի ոչ բավավարաբ ֆինանսավորման, ինչպես նաև ֆինանսական համակարգի բնականոն գործունեության խաթարման ռիսկով՝ պայմանավորված Հայաստանի Հանրապետության ֆինանսավարկային համակարգի հաշվեկշռի պասիվային մասում արտարժույթային ավանդների բարձր տեսակարար կշռով:

Տեղին է նաև նշել, որ Արժույթի միջազգային հիմնադրամի կողմից 2009 թվականի ընթացքում տեխնիկական օժանդակությամբ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին որպես խորհրդատվություն տրված Հայաստանի Հանրապետության բանկային համակարգի կարգավորման դաշտում արտարժույթի ռիսկերի կառավարման սկզբունքներից ոչ մեկը չի անդրադառնում ազգային արժույթով վարկավորման խնդրին, ընդհակառակը, առաջարկում է մեթոդներ տարբեր արժույթներով արտահայտված ակտիվների ու պարտավորությունների արտարժույթային ռիսկի արդյունավետ կառավարման համար:

Ելևելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ներկայացված նախագծի ընդունումն այս փուլում գտնում է ոչ նպատակահարմար:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարար Դավիթ Սարգսյանը:

Կից ներկայացվում են օրենքի նախագծի կարգավորման ազդեցության գնահատման եզրակացությունները:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Վարկային կազմակերպությունների մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին»

Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի

«Վարկային կազմակերպությունների մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունումը առողջապահության բնագավառի վրա ազդեցություն չի ունենա:

ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<Վարկային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի բնապահպանության բնագավառում կարգավորման

1. <<Վարկային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ օրենք) ընդունման արդյունքում շրջակա միջավայրի օբյեկտների՝ մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսների, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի, հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

2. Օրենքի նախագծի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

3. Օրենքի նախագիծը բնապահպանության ոլորտին չի առնչվում, այդ ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին և պահանջներին չի հակասում:

Օրենքի կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

ՀԱԿԱԿՈՒՈՒՊՑԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ

«Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծն իր մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված Կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չի պարունակում:

Եզրակացություն

«Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման

«Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ նախագիծ) սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 27.1 հոդվածի և ՀՀ Կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի թիվ 18-Ն որոշման համաձայն:

Նախագծի սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է սոցիալական պաշտպանության ոլորտի և դրա առանձին ենթաօլորտների իրավիճակի բնութագրիչների և դրանց ինդիկատորների հիման վրա:

Նախագիծը՝

ա) ռազմավարական կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **չեզոք ազդեցություն**.

բ) շահառուների վրա կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **չեզոք ազդեցություն**:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) ընդունման պարագայում բոլոր տնտեսվարող սուբյեկտների համար կապահովվի հավասար մրցակցային դաշտ, ինչպես նաև կամրապնդվի ազգային արժույթը՝ դրամը:

Նախագծով կարգավորվող շրջանակները չեն առնչվում որևէ ապրանքային շուկայի հետ, ուստի և Նախագծի ընդունմամբ որևէ ապրանքային շուկայում մրցակցային դաշտի վրա ազդեցություն չի կարող:

Հիմք ընդունելով նախնական փուլի արդյունքները՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով Նախագծի ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա *ազդեցություն չհայտնաբերվելու* եզրակացություն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) գործարար և ներդրումային միջավայրի վրա կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ: Գնահատման նախնական փուլում, ինչպես նաև ՀՀ Կենտրոնական բանկի հետ աշխատանքային քննարկման արդյունքում պարզ է դարձել, որ Նախագծի ընդունման դեպքում, դրա կիրարկման արդյունքում գործարար և ներդրումային միջավայրի վրա նախատեսվում է **բացասական ազդեցություն**:

Արտարժույթային վարկավորման արգելումը և սահմանափակումը ՀՀ ֆինանսատնտեսական զարգացման ներկա փուլում կարող է առաջացնել ֆինանսական համակարգի որոշակի խնդիրներ: Մասնավորապես՝ Նախագծով նախատեսվող սահմանափակումը կհանգեցնի վարկային կազմակերպությունների, ինչպես նաև արտարժույթով գործարքներ իրականացնող տնտեսվարող սուբյեկտների համար արտարժույթային չհիմնավորված ռիսկի ավելացմանը, ինչը կհանգեցնի ֆինանսական կայունության խոցելիությանը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծի բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ

«Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունումը կամ չընդունումը ՀՀ պետական բյուջեի և համայնքների բյուջեների եկամուտների և ծախսերի, ինչպես նաև բյուջետային քաղաքականության փոփոխության չի հանգեցնում:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-332-20.09.2013-ՖՎ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

**«ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. ՀՀ «Վարկային կազմակերպությունների մասին» օրենքում կատարել հետևյալ փոփոխությունը. օրենքի հոդված 8-ը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր կետով.

բա) 2014թ հունվարի 1-ից ՀՀ տարածքում վարկային կազմակերպությունների կողմից վարկերը տրամադրվում են բացառապես ՀՀ դրամով:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

**«ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

1. Բոլոր տնտեսվարող սուբյեկտները կհայտնվեն հավասար տնտեսվարման դաշտում:
2. Կամրանպնդվի ազգային արժույթը՝ դրամը, կխնայվեն միջազգային պահուստները: